

վարանինք կրկնել՝ թէ այդ մօր ու զաւակաց խոշտանգիչ կրօնից, այն է քրիստոնէութեան դէմ հակառակութիւնն ալ, զոր տեսանք մանաւանդ նախկին դարերուն մէջ, ճետն էր նոյն շուայտութեան:

Ի՞նչ բանի հետեւանք են նաեւ մեր իշխանաց շատ ստէպ ուրացութիւնք, որոց կը հանդիպինք՝ սկսեալ Գ դարէն մինչեւ Ռուբինեանց տէրութեան վերջը¹, եւ ուրոնք կը կատարուին մերթ ինքնայօժար կամօք ու մերթ նեղութենէ խուսափելու համար. ո՞չ ապաքէն անոնց չափազանց փարման իրենց կենցաղական հեշտալեաց, որով եւ հոգեկան ուժոյ պակասութեան, կամ թողմայի անսխալ բացատրութեամբ՝ «վասն իւրեանց քոչլամորքոչրեանն» (176): Այս մասին նշանաւոր է նաեւ Մանազկերտացւոյն կամ «Սակս ժողովոց» գրուածին խօսքը, որ Հայերը քաղկեդոնակա նութենէ հեռի պահելու համար ուրիշ յարմարագոյն հնարք չէ գտեր՝ բայց եթէ քառասնորդաց պահքը մեղմել: «Զշարաթ եւ զկիրակէ, կ'ըսէ, որոշեսցուք յուրախութիւն ճաշակման զօշոտացն, զի թերեւս հնարեսցին ի հնազանդութիւն խոստովա-

1. Փաւ. 140, '60. Եղեշ. 41, 78. Փրպ. 341-2, '54. Դ. Եւ. 163. Յհ. Կթղ. 159, '64, 319-20. Արժ. 176. Որբ. 125. Գարգ. 145 եւն: